

ՈՒՍՈՒՅՄԱՆ ԱՌԱՆՁՆԱԳԱՏԿՈՒԹՈՒՆՆԵՐԸ ԱՌԱՋԻՆ ԴԱՎԱՐԱՆՈՒՄ

Կ. Ս. Վիրաբյան

Երևանի Ջոն Կիրակոսյանի անվան հ.20 հիմնական դպրոցի դասվար,
մեթոդական միավորման նախագահ

Մ. Վ. Գյուլջանյան

Երևանի Ջոն Կիրակոսյանի անվան հ.20 հիմնական դպրոցի դասվար

Հանգուցային բառեր և արտահայտություններ. ուսուցման առանձնահատկություններ, հիմնախնդիրներ ու ոլորտներ, հետաքրքրաշարժ և ուսուցանող խաղեր, արդյունավետ ու մատչելի ուսուցում, ներառական կրթություն և առանձնահատուկ կարիքներ, բարոյահոգեբանական նպաստավոր միջավայր և հանդուրժողականություն, ծնող - ուսուցիչ-դպրոց կապ:

Կրթական համակարգի անցումը 12-ամյա ուսուցման ենթադրում է 6 տարեկան երեխաների ընդգրկումը հանրակրթության մեջ: Դա էլ իր հերթին խնդիրներ է առաջացնում ուսուցման գործընթացում՝ կապված 6-ամյա երեխաների տարիքային առանձնահատկությունների հետ:

Ինչպես նշված է «Հանրակրթության պետական չափորոշում», ուսուցչի գլխավոր նպատակը երեխաների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական հմտությունների ու կարողությունների ներդաշնակ ու շարունակական զարգացման ապահովումն է, ճիշտ վարքագծի ձևավորումը: [4]

Նպատակին հասնելու համար վերանայվել են կրտսեր դպրոցի հիմնական խնդիրները: Դրանք են՝

- անձի ներդաշնակ զարգացումը՝ յուրաքանչյուրի հնարավորություններին և կարողություններին համապատասխան,

- ինքնաստուգման, ինքնագնահատման կարողությունների ձևավորումը և զարգացումը,

- սովորել սովորելու կարողության

ծնավորումը և զարգացումը,

- երեխայի տարիքային պահանջ-մունքները հաշվի առնելով՝ համապատասխան պայմանների ապահովումը: [3]

Հաշվի առնելով վերոհիշյալ խնդիրները, տարրական դպրոցը պատասխանատվություն է կրում այդ խնդիրների լուծման և անձի հետագա զարգացման համար:

Հասնելու համար տվյալ նպատակին, մենք՝ դասվարներս, պետք է լավ իմանանք 6-ամյա երեխաների տարիքային առանձնահատկությունները:

Այս տարիքի երեխաները տարբերվում են 7 տարեկաններից: 6 տարեկան երեխան ավելի շուտ է հոգնում, ուշադրությունը կայուն չէ, դժվար է կառավարում հույզերը: Նրա հետ չի կարելի վարվել այնպես, ինչպես 7 տարեկան երեխայի հետ:

Միշտ չէ, որ 6 տարեկան երեխան պատրաստ է դպրոցական կյանքին: Դրա համար էլ մենք պետք է աշխատենք կարճ ժամանակամիջոցում տեղեկություններ հավաքել յուրաքանչյուր երեխայի մասին, փորձենք ճանաչել նրան, բացահայտենք թույլ և ուժեղ կողմերը, պատկերացում կազմենք նրա ընտանիքի, ծնողների և շրջապատի մասին:

Ինչպե՞ս դա կարելի է անել.

- կազմակերպել անհատական ծնողհանդիպումներ և ծնողական ժողովներ (գրույցներ, հարցաշարեր),

- վարել գրույցներ աշակերտի հետ,

- անցկացնել դիտարկումներ՝ խաղի, դասամիջոցի, համագործակցային աշխատանքի ընթացքում,

- կատարել ամենօրյա նշումներ, գրառումներ՝ յուրաքանչյուր երեխայի վերաբերյալ:

Այսկերպ, ուսուցիչը փորձում է

պարզել, թե երեխան պատրաստ էր արդյոք դպրոցական կյանքին և ուսումնառությանը:

Առանձնացվում են դպրոցին պատրաստվածության հիմնախնդիրների 4 ոլորտ՝

- սոցիալական,
- ֆիզիկական,
- հուզականային,
- իմացական:

Ուսուցումը դպրոցում պահանջում է մտավոր լարվածություն, ուշադրության կենտրոնացում, կանք, աշխատունակություն, շփում դասընկերների և ուսուցիչների հետ, վարքը դպրոցի կանոններին համապատասխանեցնելու ջանքեր: Այդ ամենը կարող է դժվարություններ առաջացնել և հոգնեցնել երեխային: Հիշենք, որ երեխան այդ տարիքում ճգնաժամ է ապրում, որը կապված է հոգեկան և սոցիալական էական փոփոխությունների հետ (արագ ֆիզիկական աճ, սեփական «ես»-ի գիտակցում, ներքին սոցիալական ձիրքի ձևավորում): [5]

Որոշ երեխաների մեջ դա կարող է առաջացնել բացասական վերաբերմունք ու հուսահատության: Նա կարող է հրաժարվել դպրոց հաճախելուց: Երբեմն ուսուցիչները ծնողներից լսում են հետևյալ արտահայտությունը. «Երեխաս չի ուզում դպրոց գալ»: Դա հետևանք է մի իրողության, որ երեխան պատրաստ չէր դպրոցին:

Ֆիզիկական ոլորտի պատրաստվածությունը իր մեջ ներառում է երեխայի շարժունակ, ձեռքի մանր մոտորիկական, տեսողությունը, լսողությունը, գրիչ-մատիտ բռնելու և գործածելու կարողությունը, նյարդային համակարգի և ընդհանուր առողջական վիճակը:

Հուզականային ոլորտը ներառում է երեխայի ցանկությունները, հույզերը:

Նա դժվար է հարմարվում դպրոցական կյանքին, եթե չի կարողանում ղեկավարել հույզերը և սեփական անձը:

Իմացական ոլորտն իր մեջ ընդգրկում է ընկալումը, ուշադրությունը, հիշողությունը, երևակայությունը, մտածողությունը, ձեռքի մանր մոտորիկան: Այս գործընթացներն առանձնահատուկ ուշադրության են արժանի, քանի որ դրանք հիմք են երեխայի մտավոր զարգացման համար:

Եթե վերը նշված ոլորտներում երեխան խնդիրներ ունի, ապա, հաշվի առնելով յուրաքանչյուր երեխայի կարիքները, առանձնահատկությունները, հուզականային վիճակը, ուսուցիչը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ՝ սովորողին օգնելու նպատակով:

Այդ գործընթացին ակտիվ մասնակցում է ծնողը և բազմամասնագիտական աջակցող թիմը:

Ուսուցիչը երեխային ներգրավում է հետաքրքրաշարժ խաղերի մեջ, բարենպաստ, բարոյահոգեբանական միջավայր է ստեղծում, ընդգրկում թիմային աշխատանքում՝ հանձնարարելով նրա կարողություններին համապատասխան առաջադրանքներ և դերեր:

Ուսուցիչը պարբերաբար զրուցում է այդ երեխաների հետ, խրախուսում, պահում է ուշադրության կենտրոնում: Սակայն նա չափավոր և հավասարակշռված հոգածություն և ուշադրություն է դրսևորում, որպեսզի նրանց մեջ չձևավորվի գերարժեքության կամ թերարժեքության բարդույթ, զարգանա ինքնուրույնությունը և ինքնավստահությունը:

Քանի որ 6 տարեկան երեխան դպրոց է գալիս ազատ միջավայրից, որին հատուկ են խաղն ու զվարճալիքները, ուրեմն պետք է նրա համար

ստեղծել հարագատ ու մտերիմ միջավայր, անհրաժեշտ կահավորում, պարագաներ:

Առանձնահատուկ տեղ պետք է գրավեն դիդակտիկ և լեզվական խաղերը, որոնք զարգացնում են աշակերտի մտածողությունը, կենտրոնացնում նրանց ուշադրությունը, զարգացնում տրամաբանությունը, ընդլայնում բառապաշարը («Գնացք», «Մկներ և կատուներ», «Լսի՛ր ուշադիր»): Երեխան պետք է սովորի՝ չկտրվելով խաղից և խաղի միջոցով:

Աշխատելով 6 տարեկանների հետ, մենք համոզվեցինք, որ խաղն է այն գլխավոր ու անփոխարինելի միջոցը, որի օգնությամբ կարելի է լուծել շատ հիմնախնդիրներ: Երեխան խաղալով գիտելիք է ստանում, ազատվում է բարդույթներից, դառնում է հանդուրժող, կարգապահ, համբերատար: Խաղն օգնում է, որ երեխան հաղորդակցվի, կենտրոնացնի ուշադրությունը, ձեռք բերի անհրաժեշտ կարողություններ ու հմտություններ, զարգացնի երևակայությունն ու տրամաբանությունը: Խաղի ընթացքում երեխան սովորում է օգնել ընկերոջը, փորձում է հաղթահարել դժվարությունները:

Երեխան սովորում է խաղալով և խաղում է սովորելով: Ձևավորվում և ամրապնդվում են՝ համարձակությունը, հնարամտությունը, կազմակերպվածությունը, հանդուրժողականությունը, ընկերասիրությունը և այլն: Հաճախ խաղը ցույց է տալիս, բացահայտում է երեխայի հոգում կատարվող գործընթացը և օգնում է մեզ ճիշտ կողմնորոշվել՝ երեխային օգնելու, թերի կողմերը շտկելու հարցերում:

Երեխան խաղի մեջ սովորում է, զարգանում, կիրառում և կատարելագործում սովորածը, հմտությունների է վերածում իր կարողությունները: [1,2]

Խաղը մեր օգնականն է, ուսումնական գործընթացը առավել գրավիչ, հետաքրքիր ու հաճելի դարձնելու գործում: Այն թուլացնում է երեխայի լարվածությունը, հոգնածությունը: Երեխան ավելի անկաշկանդ ու անմիջական է դառնում հարազատ միջավայրում: Խաղային գործունեությունը նպաստավոր պայմաններ է ստեղծում սահուն ընդգրկվելու ուսումնական գործունեության մեջ՝ առանց պարտադրանքի:

Ձանազան խաղերի (ֆիզիկական, շարժողական, ուսումնական) և վարժությունների, երաժշտական դադարների միջոցով ուսումնական գործընթացը կդառնա առավել արդյունավետ ու հաճելի: Խաղերի օգնությամբ կարող ենք դիմել ուսումնառության առաջին օրից սկսած: Օրինակ՝ «Ձույգ կազմիր և հիշիր» խաղի միջոցով երեխաները ճանաչում են, ծանոթանում միմյանց հետ: Ուսուցչի հրահանգով երեխան անվանում է այն դասընկերոջը, ում հետ ցանկանում է զույգ կազմել: Եթե նա չի հիշում ընկերոջ անունը, օգնության են հասնում ընկերները: Հաջորդ անգամ ուսուցիչն է զույգին ընտրում:

«Հիշիր տեղդ» խաղի օգնությամբ երեխաները զարգացնում են հիշողությունը և ուշադրությունը: Ուսուցիչը հրահանգում է նստել (ինքն է ընտրում զույգերին), ապա, համապատասխան երաժշտության տակ, երեխաները վազվզում են ու «խառնվում»: Երբ երաժշտությունը դադարում է, նրանք արագ նստում են նախապես որոշված տեղերում: Ովքեր ճիշտ են նստում, որևէ կենդանու ձայն են հանում՝ անվանելով կամ նկարագրելով:

«Սունկ ենք հավաքում» խաղով երեխաները սովորում են միմյանց անունները, հաշվել: Ուսուցչի ընտրու-

թյամբ երեխան անվանում է սունկ-ընկերոջը և հավաքում՝ հաշվելով: Սունկ հավաքող այն երեխան, ով չի հիշում դասընկերոջ անունը՝ մնում է ձեռնունայն: Հաղթում է այն երեխան, ով ավելի շատ է սունկ հավաքել:

«Մկներն ու կատուն» խաղը ակտիվացնում է երեխաներին, զվարճացնում, թուլացնում լարվածությունը:

«Գնացքը» խաղի միջոցով երեխաները կարող են նոր հնչյուն-տառով բառեր կազմել: Օրինակ՝ ուսուցիչ - մեքենավարի հրահանգով երեխաները նոր հնչյունով, տարբեր տեղադրությամբ բառեր են կազմում և միանում գնացքին: Գնացքը շարժվում է դասարանում շարքերի միջով: Ապա երեխաները, հասնելով իրենց նստարաններին, դառնում են աշակերտ և նստում են:

Կարելի է նմանատիպ շատ այլ խաղերի միջոցով ուսումնական գործընթացը դարձնել յուրաքանչյուր երեխայի համար ուրախ ու հասանելի:

Իմացական ոլորտում հաջողությունների հասնելու համար պետք է ուսումնական գործընթացը կազմակերպել այնպես, որ զարգանա երեխայի հիշողությունը, երևակայությունը, ուշադրությունը, մտածողությունն ու խոսքը: Դրան նպաստում են նկարչությունը, ապլիկացիան, գրաֆիկական վարժությունները, խճանկար կազմելը, կոնստրուկտորով աշխատանքները: Խորհուրդ է տրվում այդ բնույթի աշխատանքները հաճախակի կատարել զույգով կամ խմբերով:

Պետք է հասնել նրան, որ երեխան կարողանա առարկաներն ու երևույթները ընդհանրացնել, տարբերակել, նկարագրել, ընկալել տեղեկատվությունը և այն վերամշակել: Օրինակ՝ գտնել պատկերների նմանություն-

ներն ու տարբերությունները, խմբեր կազմել, գտնել ավելորդը և այլն:

Այս տարիքի երեխաների մոտ գերիշխում է մեխանիկական հիշողությունը և ուսուցչի խնդիրն է, որ աստիճանաբար ձևավորի և զարգացնի բառային-տրամաբանական և պատկերավոր հիշողության տեսակները: Նաև լավ զարգացած չէ վերացական մտածողությունը: Նրանք հիշում և ընկալում են հատկապես այն, ինչը տեսնում կամ շոշափում են: Որքան շատ զգայարաններ մասնակցեն տվյալ նյութի ընկալմանը, այնքան նյութը հեշտ կհիշվի և կտպավորվի: Դրա համար սկզբնական շրջանում հնարավորինս շատ պետք է օգտագործել դիդակտիկ պարագաներ, պաստառներ, ՏՀՏ-ի ընծեռած հնարավորությունները (մուլտֆիլմ, դիաֆիլմ, սահիկահանդես):

Օգտակար է օգտագործել ձեռնոցային տիկնիկները: Լավ կլինի, որ դրանք լինեն նրանց ծանոթ հեքիաթների կամ մուլտֆիլմերի հերոսներ: Կարելի է դասարանով ընտրել տիկնիկ-խորհրդանիշ, տիկնիկ-հեքիաթասաց, տիկնիկ-ծաղրածու, որը վարի դադարի պահը և այլն: Օրինակ՝ մաթեմատիկայի դասին հյուր է գալիս հետաքրքրասեր Կոկո թութակը, իմաստուն խորհուրդներ է տալիս Սոնա տատիկ-տիկնիկը, դադարի պահը վարում է Չապի բադիկը և այլն:

Նմանատիպ տիկնիկ-օգնականների օգտագործումը մեր խոսքն ավելի գրավիչ ու պատկերավոր է դարձնում, հատկապես, երբ ուղեկցվում է մեծադիր նկարներով, դիդակտիկ պարագաներով, երբեմն էլ՝ համապատասխան երաժշտությամբ: Այս տարիքի երեխաները սիրում են երգել, ակտիվ շարժվել, խաղալ: Հենց դրանց միջոցով էլ կարող ենք երեխաներին ներգ-

րավել ուսումնական գործընթացում:

Առանձնահատուկ տեղ պետք է գրավի համագործակցային ուսուցումը: Դա թույլ կտա երեխաներին շփվել, մտերմանալ, օգնել ու լսել միմյանց, կիրառել սովորածը, ձեռք բերել անհրաժեշտ կարողություններ և հմտություններ:

Նրանք սովորում են հաղթահարել դժվարությունները, հարգել միմյանց, ինքնուրույն աշխատել և ի վերջո՝ որոշումներ կայացնել: Սկզբնական շրջանում խմբային աշխատանքները կարելի է կազմակերպել կերպարվեստի և տեխնոլոգիայի դասերին:

Համագործակցային, աշակերտակենտրոն դասերը արդյունավետ ուսումնառության հիմքն են դառնում: Կարևորություն պետք է տալ յուրաքանչյուր դասին՝ պահպանելով միջառարկայական կապը: Այդպիսով մենք ավելի կամրապնդենք, կզարգացնենք, ամբողջական կդարձնենք գիտելիքը, նյութը:

Պետք է ապահովել, բարձրացնել գրական-գեղարվեստական ունկնդրումների, ընթերցանության դասաժամերի արդյունավետությունը: Այս դասերը պետք է անցնեն անկաշկանդ, անմիջական, մտերմիկ մթնոլորտում: Այն պետք հաճույք պատճառի երեխային, հնարավորություն ընծեռի ազատ ու անկաշկանդ արտահայտվել, ստեղծագործել, բնութագրել հերոսներին:

Գրական ունկնդրումների մի մասը մեր կարծիքով պետք է հատկացվեն «ազատ» ընթերցանությանը: Այսինքն, երեխան ինքը պետք է ընտրի հեքիաթը կամ այլ ստեղծագործություն, ընթերցի(եթե դեռևս կարդալ չգիտի, ապա տանը կընթերցի մայրիկը կամ ընտանիքի այլ անդամ): Ապա հաջորդ օրը հեքիաթի գրքույկով ներկայանա

դասին և փորձի պատմել ընթերցածը: Ուսուցչի օգնությամբ երեխաները պատասխանում են հարցերին, բնութագրում հերոսներին, նկարում, երբեմն էլ՝ բեմադրում հեքիաթը: Նաև կարելի է կազմակերպել հեքիաթի, ստեղծագործությունների դիտումներ կամ գեղարվեստական ունկնդրումներ:

6 տարեկան երեխաների համար շատ կարևոր ու անհրաժեշտ են դադարի պահերը: Դրանք պետք է լինեն կարճատև, հետաքրքիր, աշխուժացնող ու ոգևորող: Կարող են լինել նաև երաժշտական բնույթի:

Դասամիջոցին երեխաները պետք է շփվեն, խաղան, վազվզեն, նախաճաշեն և հանգստանան: Երեք չի կարելի զբաղեցնել երեխաների դասամիջոցը:

Օգտակար ու անհրաժեշտ գործոն է խաղասենյակի առկայությունը: 6-ամյա երեխաներին հոգեհարազատ այս անկյունը կարելի է շատ արդյունավետ օգտագործել:

Խաղասենյակը պետք է հագեցած լինի անհրաժեշտ պարագաներով՝ խաղալիքներ, գորգ, բարձիկներ, մարզական պարագաներ: Կարելի է այնտեղ անցկացնել գրական ունկնդրումները, դադարի պահերը, շարժողական խաղերը:

Այս տարիքի երեխաներին ավելի ճիշտ է գնահատել խոսքով՝ « Լավ է», « Շատ լավ է», « Ապրե՛ն», « Այսօր դու փայլեցիր», « Դու մեր Գիտունիկն ես»:

Գնահատումը պետք է ոգևորի, խրախուսի, առաջ մղի երեխային: Հարկավոր է բացահայտել ու գնահատել երեխայի ցանկացած քայլը և նրան համեմատել ինքն իր հետ: Կարելի է կիրառել ինքնագնահատումը և փոխադարձ գնահատումը խոսքով կամ խորհրդանիշներով:

6-ամյա երեխայի կրթությունը արդ-

յունավետ կազմակերպելու համար պետք է մշակել գրագետ, նպատակային ռազմավարություն, որը կօգնի հաղթահարել ուսումնական գործընթացում առաջ եկած խնդիրները:

Ուսուցչի աշխատանքի կազմակերպման հիմքում, որպես սկզբունք, ընկած է կրթական գործընթացի ժամանակակից մոտեցումները:

6-ամյա երեխայի կրթությունը ճիշտ կազմակերպելու համար լրացուցիչ գիտելիքներ, ջանքեր, հմտություններ են պահանջվում ուսուցչից: Ծնող-ուսուցիչ, ուսուցիչ-աշակերտ, համայնք-դպրոց միասնական աշխատանքի շնորհիվ կարող ենք հասնել լուրջ հաջողությունների:

Միասնական ջանքերի արդյունքում կօգնենք երեխային հնարավորինս սահուն և անցավ հաղթահարել խնդիրները: Դա կնպաստի, որ աշակերտը հետագայում հաջողություններ գրանցի կրթական մյուս գործընթացներում:

Առաջին դասարանում ուսուցման գործընթացի կազմակերպման առանձնահատկություններից մեկն էլ ներառական կրթությունն է, որը «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն ներդրվեց որոշ դպրոցներում:

Տասը տարուց ավելի է, ինչ մեր դպրոցում իրականացվում է այս գործընթացը: Այդ տարիների ընթացքում մենք համոզվեցինք, որ այն արդարացված է և իրագործելի:

ՀՀ յուրաքանչյուր քաղաքացու հիմնական իրավունքը կրթություն ստանալու իրավունքն է: Ներառական կրթությունն էլ մի գործընթաց է, որ հենվում է հենց այս իրավունքի վրա: Ինչու՞ մեր հասարակության որոշ մա-

սի իրավունքները պետք է ոտնահարվեն, մերժվեն կամ էլ ստվերում մնան:

Սկզբնական շրջանի դժվարություններն այլևս հաղթահարված են, և մենք բավականին փորձ ու հմտություններ ենք կուտակել:

Հիմա, երբ ընդունում ենք մեր սաներին, այլևս չենք տարբերակում երեխաներին: Նրանք բոլորն էլ ունեն առանձնահատկություններ, հատուկ մոտեցման կարիք: Ուղղակի կարիքները տարբեր են. մեկը ակտիվ է, շարժուն, մեկը ինքնամփոփ է և չի սիրում շփվել, մեկը շուտ է հոգնում, մեկը դժվար է կենտրոնանում, մեկն ապրում է իր աշխարհում, մեկը...Եվ այսպես շարունակ:

Այսպես էլ սովորեցնում ենք մեր աշակերտներին՝ լինել հանդուրժող, հաշվի նստել մյուսների իրավունքների հետ:

Մենք տարբերություն այլևս չենք փնտրում, չենք դնում և հասկանում ենք, որ ԿԱՊԿՈՒ երեխան ունի նույն իրավունքները և պետք է կրթություն ստանա (հնարավորության սահմանում) իր հասակակիցների հետ: Դպրոց-ծնող-ուսուցիչ-հասարակություն շղթան աջակցող թիմի հետ պետք է առաջ տանի այս գործընթացը և հասցնի իր նպատակներին:

Ուսուցչից պահանջվում է հնարավորինս մատչելի և որակյալ դարձնի դասավանդումը, ուսումնական գործընթացը, որպեսզի ապահովի բոլոր աշակերտների ինտեգրումն ու ներառումը: Ապահովի բարոյահոգեբանական այնպիսի մթնոլորտ, որտեղ բոլոր երեխաներն իրենց լավ կզգան և անտեսված չեն լինի:

Մենք կարևորում ենք այն հանգամանքը, որ ծնողը ևս պետք է ներգրավված լինի այս գործընթացում: Դրա համար կազմակերպում ենք

գրույցներ, դասախոսություններ բոլոր ծնողների համար: Պատասխանում ենք նրանց հուզող հարցերին, պարզաբանում ենք և լուծում տալիս ծագած խնդիրներին: Մեր գրույցների հիմքում դնում ենք յուրաքանչյուրի կրթություն ստանալու իրավունքը՝ որպես սկզբունք, օրենք:

Նկատելի է, որ ծնողները արդեն բավականին տեղեկացված են և գիտակցորեն են վերաբերվում այս գործընթացին, խնդիրներ չեն առաջացնում: Վերանում են կարծրատիպերն ու կանխակալ վերաբերմունքը:

Գնալով, բոլորս էլ համոզվում ենք, որ ներառական կրթությունը բոլոր երեխաներին է վերաբերվում: Դիտարկման արդյունքում տեսնում ենք, որ բոլոր երեխաներն էլ ունեն ներառման կարիք (հատուկ կարիք): Կան երեխաներ, ովքեր ունեն վարքային, սոցիալական, բարոյահոգեբանական, առողջական, ընտանեկան և այլ խնդիրներ:

Մեզանից պահանջվում է յուրաքանչյուրին անհատական մոտեցում ցույց տալ և այնքան մատչելի դարձնել դասավանդումը, որ այն ընդգրկի, ներառի յուրաքանչյուրին՝ իրենց հնարավորություններին և կարողություններին համապատասխան:

Դիտարկման շրջանից հետո, գրառումների հիման վրա, ծնողի և աջակցող թիմի հետ մանրամասն քննարկման և վերլուծման արդյունքում՝ որոշում ենք մեր հետագա անելիքները: Ծնողը պետք է հստակ պատկերացնի իր երեխայի հնարավորություններն ու զարգացման հեռանկարները և աջակցի ուսուցչին և աջակցող թիմին՝ կազմակերպելու ներառման գործընթացը (ԿԱՊԿՈՒ երեխայի):

Պետք է հաշվի նստել այն փաստի հետ, որ ԿԱՊԿՈՒ երեխան և նրա

ծնողը մնում են շատ ավելի խոցելի: Ուստի առանձնահատուկ ռազմավարություն պետք է մշակել հատկապես նրանց համար: Դրա համար կազմակերպում ենք անհատական ծնող-հանդիպումներ ու զրույցներ: Ծնողի, աջակցող թիմի հետ միասին դնում ենք իրատեսական նպատակներ և մշակում դրանց հասնելու պլաններ:

Անհրաժեշտության դեպքում ուսումնական գործընթացում ընդգրկվում է ուսուցչի օգնականը, ծնողը: Եթե երեխան ունի հենաշարժողական խնդիր, ապա դպրոցն ու համայնքը, շագագրգիռ կազմակերպությունները պետք է ապահովեն համապատասխան կահավորումն ու պարագաները: Այստեղ դեռևս անելիքներ կան և սպասում են իրենց լուծմանը՝ պատկան մարմինների կողմից:

Մենք փորձում ենք աշխատել այնպես, որ յուրաքանչյուր երեխա օգուտներ քաղի յուրաքանչյուր դասաժամից իր հնարավորության չափով: Ուսումնական գործընթացը հարմարեցնում ենք յուրաքանչյուրին: Շերտավորված ուսուցումն էլ հնարավորություն է տալիս դասարանի բոլոր շերտերին առաջ շարժվել, զարգանալ ու կատարելագործել գիտելիքները, հմտություններն ու կարողությունները:

Կարևորում ենք երեխաների հետ

տարվող զրույցները՝ հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները: Ուսուցիչը պետք է դրսևորի ճկունություն: Օրինակ՝ երեխայի այն հարցին, թե ինչու՞ է դասընկերը (ի դասարան) սայլակով, մի՞թե այդքան փոքր է նա, կարելի է պատասխանել այսպես. «Դուք շատ բաներով նման եք միմյանց, օրինակ՝ հասակակից եք, սովորում եք միևնույն դասարանում, բայց նաև տարբեր եք: Տարբերվում եք մազերի գույնով, հասակով, բնավորությամբ և էլի շատ բաներով: Չէ՞ որ մենք մի մեծ ընտանիք ենք և պետք է հարգենք ու աջակցենք միմյանց...»: Հետագայում կարելի է այլ կերպ զարգացնել զրույցը:

Դժվար է, երբ երեխաները նմանակում են ընկերոջ արարքներն ու շարժումները: Ուսուցիչը պետք է հմտորեն երեխաներին համոզի այդպես չանել: Օրինակ՝ կարելի է երեխաներին ասել. «Մենք այդպես չպետք է անենք, որովհետև դա ճիշտ չէ: Եկեք մեր օրինակով ու վարքով համոզենք մեր ընկերոջը, որ ինքն էլ այդպես չվարվի »:

Երեխային չպետք է խղճալ, այլ պետք է աջակցել, ուղղորդել: Ձևավորելով հասարակության լիարժեք ու լիիրավ քաղաքացի՝ կարող ենք հպարտորեն փաստել, որ հասել ենք մեր նպատակին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ա. Արմատյան, Ա. Գյուլբուդադյան, Ս. Խաչատրյան, Ս. Խրիմյան, Ս. Պետրոսյան, Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար, ԿԱԻ, 2004 թ.

2. Կ. Թորոսյան, Յ. Խաչատրյան, Ս. Սարգսյան, Ռ. Սարգսյան, Տարրական դասարանների հայոց լեզու և մաթեմատիկա, ԿԱԻ, 2006 թ.

3. Կ. Թորոսյան, Յ. Խաչատրյան, 6 տարեկան դպրոցականների ուսուցումը, ԿԱԻ,

4. Հանրակրթության պետական կրթակարգ,

5. Հերթական ատեստավորման ենթակա դասվարների մասնագիտական վերապատրաստման դասընթացների մոդուլ, ԿԱՍ, 2011 թ.

РЕЗЮМЕ

ОСОБЕННОСТИ ОБУЧЕНИЯ В 1 КЛАССЕ

К.С.Вирабян

учитель начальных классов, заведующая секцией школы
N20 им. Дж.Киракосяна

М.В.Геолчанян

учитель начальных классов школы N20 им. Дж.Киракосяна

В статье проанализирована специфика обучения в 1 классе, освещаются возникающие проблемы, а также подтвержденные собственным опытом методы и средства их преодоления.

Представлена значимость и роль обучающих игр, обеспечения доступности и качества обучения,

формирования благоприятного морально- психологического климата в классе. Анализируются ряд проблем инклюзивного образования и методы их преодоления.

Отмечена ведущая роль учителя – носителя общечеловеческих ценностей, владеющего современными технологиями обучения.

SUMMARY

PECULIARITIES OF TEACHING IN THE 1ST CLASS

K.S.Virabyan

primary school teacher, head of section of the school
№ 20 after J.Kirakosyan

M.V.Geolchanyan

primary school teacher of the school № 20 after J.Kirakosyan

The article analyzes the peculiarities of teaching in the first class, the emerging issues as well as validated methods based on the personal experience and means of their overcoming are highlighted. The importance and role of educational games, provision of accessibility and quality of training, formation of favorable moral psychologi-

cal climate in a class is presented.

A number of problems of inclusive education and methods of their overcoming are analyzed.

The leading role of the teacher – the carrier of universal values mastering modern teaching technologies is noted.